




“ԹՈՂ ՏՈՒԷՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ” ԳՈՒԿ. ԺԸ. 46.

ՀԱՏՈՐ ԺԲ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԱՊՐԷԼ 4, 1883

ԹԻԻ 4



ՏԵՄԱՐԱՆԻ Ի ՐՈՒՍԻԱ

Աւետարեի այս թուոյն առաջին երկու պատկերք են Րուսիոյ վերաբերեալ տեսարաններ: Առաջին պատկերը կը ցուցնէ Րուսական պանդոկ

ՐՈՒՍԱՆԸ ՊԱՆԳՈՒՄ ՄԸ

մը: Հիմա Րուսիոյ գլխաւոր քաղաքներն իրարու հետ հաղորդակցութիւն ունին երկաթուղիներով, և այն քաղաքացի մէջտեղ ճամբորդել չէ տար-

բեր քան ճամբորդել Եւրոպոյի ուրիշ կողմերը: Բայց Րուսիոյ մէջ կան ընդարձակ տեղեր յորտ երկաթուղի չկայ, և այն տեղերը ճամբորդութիւն կըլլայ ըստ վաղեմի սովորութեան:

ԲԱՐՁՐ ՆՊԱՏԱԿ

Բուսիոյ մէկ մեծ մասը ձիւնով կը ծածկուի երկարատեւ ձմրան ատեն, և այն ցուրտ եղանակաց մէջ մարդիկ ընդհանրապէս կը ճամբորդեն դա- հուկներով, և դահուկով ճամբորդու- թիւնն արագ և հանգիստ է: Գար- նան և աշնան ատեն փողոցները շատ ցեխոտ են, և զրեթէ անանցանելի: Ամրան ատեն ճամբորդութիւնը կ'ըլ- լայ կառօք, որ, ինչպէս կը տեսնուի պատկերին մէջ, ծածկուած է լաթով ճամբորդները պահպանելու համար ա-

րբողով, և այն հրապարակին մէջ կան մայր եկեղեցիներ, պալատներ, վանքեր և ուրիշ տեղեր որոց շատ յարգութիւն կ'ընծայեն Բուսը: Քրիմ- յինի մէջ է Իփանի աշտարակն, որոյ ոսկեղօծ խաչն է 323 ոտը բարձր գեանէն, և այն աշտարակին մէջ կան 36 զանգակ, որոց մին կը կշռէ 30,000 քաշ:

Մայր եկեղեցիներէն միոյն, այսինքն վերափոխման եկեղեցւոյ, մէջ թագ դրած են Բուսիոյ բարձր կայսերը Ա-

Տրայք, թերևս չկայ ուրիշ բան որ քան բարձր նպատակ ունենալն աւելի օգնէ ձեզ յառաջադիմելու ուսման և բարի վարուց մէջ: Կը յուսամ որ զիւրին պիտի հասկնաք ինչ բտել է բարձր նպատակ ունենալ: Ենթադ- ընեք թէ կարապետ կ'ուզէ սնտուկ մը շինել: Կ'առնէ քանի մը տախ- տակի կտոր և գամ, նաև զործիք- ներ որ հարկաւոր են սնտուկ շինե- լու, և կ'ըսէ ինք իրեն. « Ես դեռ

ապայ եմ, ինչ չսպասուի որ շատ աղէկ գործ ընեմ: Հող չեմ ըներ թէ տախ- տակները ինչպէս յարմարցնեմ ա- ղէկ դէշ անոնք իրարու քով կը բերեմ, և սնտու- կի նման բան մը կը շինեմ:» Կա- րապետ այսպէս կտրհելով փոյթ չտանի որ գործը աղէկ շինելու: Տախտակները կը կտրէ ստանց լա- մը չափելու, և յետոյ երբ կտոր- ները կը բերէ ի- բարու քով, կը սեանէ որ անոնք չեն յարմարի ի- բարու: Մէկ կողմն աւելի եր- կար է քան ըզ միսն, ծայրերը չեն յարմարի ի- բարու, և յա- տակի տախտակը լաւ չընեն քո- վինները, ուստի սնտուկը կ'ըլլայ այնպիսի անհե- ղեղ գործ մը ո- թուն համար կա- րապետ իսկ կ'ա- մրչնայ:



կը խորհէր ձմեռը հոն անցունել իւր բանակով, բայց Մոսքուայի Բուս կա- ուսութիւնն երբ ստիպուեցաւ քաղաքը թողլով քաշուիլ, կրակ տուաւ քաղա- քին և միտիւր դարձուց անոր մեծ մասն, որպէս զի Գաղիական բանակը չկարե- նայ հոն անցունել ձմեռը: Ուստի և նա- բողէնն ստիպուեցաւ ետ քաշուիլ, և կորսնցուց զրեթէ բարձր բանակը: Քա- ղաքը վերստին շինուեցաւ: Հին քա- ղաքին կեդրոնին մաս է Քրիմիին, որ եռանկիւնի հրապարակ մ'է շրջապա- տեալ 28 է մինչև 30 ոտը բարձր պա-

հատուկ շինելու ձեռնարկելէ առաջ կարապետ ըսէ ինք իրեն. « Գիտեմ թէ ինչ է աղէկ սնտուկ, և պիտի աշխատիմ աղէկ սնտուկ շինել: Պիտի ջանամ որ սնտուկին քովերն ըլլան շիտակ, անկիւնները քառակուսի, և յատակը քովերուն յարմար:» Այս- պէս խորհելով գործի կը սկսի, տախ- տակները շատ զգուշութեամբ կը չա- փէ, վասն զի աղէկ սնտուկ շինելու համար նախ աղէկ չափ առնելու է: Յետոյ ճիշդ չափուած տեղերէն կրա-


ՐՆՈՒՄՆԻ ԳՐԱՆՑ ՄԻՆ
Հատուկ խմբի օրէն ի վեր: Բուսիոյ սոյնմու կայսեր թագադրութեան հան- գէտը պիտի կատարուի այս եկեղե- ցին յառաջիկայ Մայիս ամսոյ մէջ, և այժմէն մեծամեծ պատրաստու- թիւններ կ'ըլլան այն հանդիսին հա- մար: Կը յուսանք որ թագադրութեան հանդէսը չվրդովիւր չարապործ մար- դոց դաւերով, և կայսրն ու կայս- րուհին կը յաջողին խաղաղութեամբ կառավարել և երջանիկ ընել Բուսաց մեծ ազգը:

Ընդհակառակն, ենթադրենք թէ սնտուկը շինելու ձեռնարկելէ առաջ կարապետ ըսէ ինք իրեն. « Գիտեմ թէ ինչ է աղէկ սնտուկ, և պիտի աշխատիմ աղէկ սնտուկ շինել: Պիտի ջանամ որ սնտուկին քովերն ըլլան շիտակ, անկիւնները քառակուսի, և յատակը քովերուն յարմար:» Այս- պէս խորհելով գործի կը սկսի, տախ- տակները շատ զգուշութեամբ կը չա- փէ, վասն զի աղէկ սնտուկ շինելու համար նախ աղէկ չափ առնելու է: Յետոյ ճիշդ չափուած տեղերէն կրա-

ընդու փոյթ կը տանք : Եւ սոցալէս երբ կտորները կը գնէ իրարու քով, կը տեսնէ որ անոնք բաւական կը յարմարին իրարու : Մնասկն անթերի չեզու , քանզի գործ մը ճշդիւ կատարելու համար շատ վարժութիւն պէտք է , ոտկոյն աչքի զարնելու խաչոր սխալմունք եղած չէ , և կարուպեա պիտի չամշնայ սնասկը ցուցնել իւր բարեկամաց : Արդ , այս երկու պարագայից մէջ տեսնուած տարբերութիւնն է բարձր և ցած նպատակի տարբերութիւն :

Մտաւոր օրինակը կը ցուցնէ ինչ որ ճշմարիտ է ուրիշ բաներու մէջ : Այն աշակերտը որ բարձր նպատակի մը կը նայի , եթէ կատարելութեան չհասնի իսկ , աւելի շատ բան կը սորվի քան այն աշակերտն որ գոհ կ'ըլլայ բան մը կատարող սորվելով : Երբ մեր միտքը կը գնե՛նք լեբան զազալմն ելլել , եթէ զազալմն ելլելու կարող իսկ չըլլանք , կ'ըլլենք աւելի բարձր քան զոր պիտի ելլէինք եթէ գոհ ըլլայինք ցած բլուրներէն մին մնալ :

Ք սրդոյական յատկութեանց մասին ալ սոցալէս է : Քրիստոս ինքն ըսած է մեզ թէ ինչ ըլլալու է մեր նպատակը . «Գուք կատարեալ եղէք՝ ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրն ալ կատարեալ է » : Ձեռք կրնար յուսով թէ մենք կը հասնինք Աստուծոյ կատարելութեանը , քանզի Աստուած անհուն և անսահման է : Բայց Աստուծոյ կատարելութիւնը միշտ աչուրնեւրան առջև ունենալով միշտ ջանալու ենք զէպ այն կատարելութիւնն երթալ . երբէք բանու կամ խորհելու չենք թէ եղած ենք այնչափ բարի որչափ հարկաւոր է մեզ : Ո՛հ , ո՛չ մեր նպատակն ըլլալու է բացարձակ կատարելութիւն : Եթէ կատարեալ ըլլալու իսկ ջանանք զեւ կատարելութենէ հետի պիտի մնանք : Կատարելութենէ վար նպատակ ունենալ աղէկ չէ մեզ : Այո՛ , սիրելի աղայք , ամէն բանի մէջ ձեր աչուրնեւրան առջև ունեցէք բարձր նպատակ մը , և ապա աղօթելով և հաւատարիմ ջանիք աշխատեցէք հասնիլ այն նպատակին :



ԸՆՏԱՆԵԱԼՆ ՀԻՆ ԱՌԻՐ ԳՐԻՐՆ

Տարիներ առաջ կը բնակէին ի Սիովա տիա ձեր այր մը և ձեր կին մը , որ բաւական ունեւոր էին , և ունէին աղջիկ զաւակ մը միայն : Երիտասարդ երկրագործ մը ուզեց ամուսնանալ այս աղջկան հետ , և աղջիկն հաւանած էր երիտասարդին , ուստի ձերտնի լծակիցք համաթիւն տուին անոնց ամուսնութեան : Քանի մը աւրի ետքը ձերտնի լծակիցք մեռան : Գեռահասակ երկրագործն յաճախ

ըսած լինելով Ամերիկացի վրայ խորհեցաւ այն երկիրը զազլմել , և վաճառելով ինչ որ անպէս էր , և ժողովելով ինչ որ կը համարէր թէ կրնային օգտակար ըլլալ իրեն հոն՝ պատրաստեցաւ ճարաց ելլելու : Քանի մը գրացիք ալ անոնց հետ երթալու փոխաբերով վաճառեցին իրենց տուներն և գետիններն և այն դեռահաս լծակիցաց հետ նաւեցին յԱմերիկա : Այս խումբը ըստ բաւականին գրամ ունէր , և ապագային համար լիպոյս էր և երջանիկ : Երբ զազլմականք ցամաք ելան , երիտասարդ երկրագործին և կնոջն առաջին գործն եղաւ բանալ Սուրբ գիրքը և մատուցանել նորհակալութիւն և փառաբանութիւն՝ նմա որ առաջնորդեց նաւն ապահով ի նաւահանգիստ :

Երիտասարդին նպատակն էր Ամերիկա երթալով ազարակ մը գնել և երկրագործութեան պարսպիլ : Ռուստի ժամովաճառ չեղաւ ի քաղաքին ուր ցամաք ելած էր , և որովհետև իւր ուղեկիցք որոշած էին այն քաղաքը մնալ , ինք հրաժարական ուղջոյն տուաւ նոցա , և զուարթ սրտով ճամբորդեց զէպ յարեմուստ : Ինտիանա նահանգը յայնժամ արագ կը չէննար , և երիտասարդը ըսած ըլլալով թէ այն նահանգին մէջ հողը զիւրազնի և լաւ էր , որոշեց հոն բնակիլ : Այն նահանգին մէջ գետի մը եզերքը գնեց կարուած մը , և անոր գնայն մի մասը կանխիկ հատոյց , և մնացեալին համար գրաւ տուաւ մէկ տարիէն հատուցանելու պայմանաւ : Ազարակն արդէն բաւական չէն էր , ուստի ինք այն տարի սերմ ցանեց և հանդստացաւ իւր գործերէն , և համբերութեամբ կը սպասէր հնձոց ժամանակին : Բայց , աւս՛ղ , ցորենոյ հատիկերն չուրախացոյցին նորա սիրտըն , զի գէշ տենդ մը յարձակեցաւ նորա վերաց , և մահը յախշտակեց գնա թողլով անմխիթար կինն այրի և միակ զաւակն որք :

Տարի մ'ետքը ժամանակ եկաւ ազարակին մնացեալ գինը հատուցանելու , և թշուառ այրին հարկաւոր գրամը շահով փոխ առաւ զբացիէ մը : Համբերութեամբ աշխատեցաւ որոշեալ ժամանակին վճարել իւր գրացոյցն , բայց բախտն անյստիջ զընայ , և չկրցաւ պարտքը հատուցանել , ուստի գառնակօրէի ցառով ստիպուեցաւ ազարակը նուազ գնով թողուլ իւր գրացոյցն , որ ստով ալ գոհ չըլլալով նորա կարատեայն ևս ձեռք երկնցուց :

Ինչոյ վաճառման նախընթաց կիւ-

րակէն խեղճ այրին ելաւ գնաց իւր երկնաւոր Հօր առճարն , և սիրով լի սրախ կը հեղոյր իւր ոգին առաջի Նորա որ երես չգարձներ մէկէ մը : Իւր գրացոյցն հետ սեղանակից լինելով սուրբ ընթրեաց դարձաւ իւր ամացի տունն , և հոն ձեռք առաւ ընտանեկան հին Սուրբ գիրքն , և գտաւ մխիթարութիւն անոր սինեքուն մէջ : Վաճառման օրը հաւաւ , և խեղճ այրոյցն ինչքերն աճուրդի դրուեցան , և աւելի գին տուողն առաւ ինչ որ կ'ուղէր : Խեղճ այրին առանց արանջելու կը դիտէր իւր ընչից վաճառուին , և ահա կարգն եկաւ ընտանեկան հին Սուրբ գրոց : Արաւսուքը կը յայտնէին թէ սրտառու ինքն չէր ուզեր որ այն գիրքը վաճառուէր , ուստի և ինչորեց մուսնետիկէն իրեն թողուլ իւր յարգելի ծնողաց այս յիշատակն , բայց պարտատէրն պնդեց թէ ամէն բան վաճառուելու էր : Երբ գիրքը քանի մը թալէր գնով պիտի վաճառուէր , խեղճ կինն խեղճն առաւ զայն ըսելով թէ անոր մէջ իւր սիրածներէն քանի մը յիշատակներ կրնային գանուիլ , և կարեց բարակ թէրն որ կը բռնէր գրքին կտաւեայ ծածկոյթը : Ծածկոյթն ինկաւ անոր ձեռաց մէջ , և անոր հետ երկու բաւակ և յեխտա թղթի կտորներ : Չարմանալով քննեց այն թղթի կտորներն , և ի՛նչ մեծ եղաւ անոր ուրախութիւնն երբ տեսաւ թէ զբաւալման թղթեր էին 300 ոսկուց արժուող թեամբ : Այս թղթերէն միոյն ետին անոր մօր ձեռքը դրուած էին հետեւեալ բառերն . «Երբ որո՞ւմն հասնի թէ , քննե՛ք Սուրբ գիրքը ,» և միւս այն ետին նորա հօր ձեռքը դրուած էր , «Ձեր Հօր սիրածներն երբեք իսկ չեն :

Վաճառումն անմխիթալէս զազրեցաւ , ընտանեկան Սուրբ գիրքը տրուեցաւ հաւատարիմ տէրոջը և ծախուած կարասիքն ալ ետ առնուեցան : Խեղճ այրին վարձեց փոքրիկ տուն մը , և իւր զբամին մնացեալ մասն այնպէս կարգադրեց որ կ'ընդունի բաւական չահ , և այժմ կարող է վայելել ընտանեկան Սուրբ գրոց ընթերցումն առանց վախու և նեղութեան :

Թարգմանեալ Աբգրիբեէէ
 յԱ.Կ. ԳՐԻԳՈՐ Գ. ԳԱՐՈՒԷԼԵԱՆ

Ա. Ղ. Օ. Թ. Բ.

Ինձ սորսմէ, Փրկիչ զթամ, Չարէն փրկէ զեւ չը մեռած, Չիս ազատէ սատանայէն, Եւ մի թողոր երթամ իրեն:

Քեզի կու գամ, մեղքերս ներէ, Աիրաս ու հոգիս, սրբէ մաքրէ. Որ չըլլայ թէ գոթիք երթամ, Ու լոյս երեսդ ալ չտեսնամ:

ՍԱՏԱՆԱՅԻՆ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՆ

Սատանան բազմաթիւ զինուորներ ունի, որ կ'օգնեն անոր մեղի հետ պա-

տերազմելու առնէ: Աստուծոյ մէկուն ա նաան է «Ոչ հիմա, այլ քիչ մ'եւրը»: Իւրիկան մը սատանա յին այս զինուորը ե կաւ և Յովհաննէսին քով կայնեցաւ, երբ նա կը պատրաստուէր իւր աղօթքն ըսել: «Ո՛հ, դուն շատ հոգ նած ես» ըսաւ փորձիչն, «սպասէ՛ մինչև որ անկողին մանես»: Այսպէս Յովհաննէս պառկեցաւ առանց շնորհակալ ըլլալու: Աստուծոյ կամ անոր պաշտպանութիւնը ինչդրելու, և քնացաւ: Հետեւեալ իրիկունը «Ոչ հիմա, այլ քիչ մ'եւրը» գործեալ եկաւ, և նոյն բանը կրկնեց, և Յովհաննէս բորբոզի մը վերջացուց աղօթելու օրհնեալ սովորութիւնն:


Սատանայի մէկ ուրիշ զինուորն է «Միայն այս անգամ»: Սա ևս եկաւ օր մը Միհրանին և ըսաւ, «Միայն այս անգամ»: Միհրան դաճեկան մը առաւ կամ գոցցաւ իւր մօրը դորոջէն: Միհրան շարունակեց գորոջէն բան առնելն առանց հրամանի, և երբ չափահաս եղաւ, հարիւրաւոր դաճեկաններ և տեղի մեծ բաներ գողցաւ և բանտարկուեցաւ:

«Գաթէն դուրս մի՛ ելլեր» ըսաւ Եսթերին մայրը, բայց սատանային երբորդ զինուորը, որուն անունն է «Վտանդ չկայ» Եսթերին ախանջն ի վար փախաց, և նա գաթէն դուրս փողոց ելաւ, սակայն ձի մը վա-

զերու ստան ոտնակոխ ըրաւ զնա, և խեղճ աղջիկը դրեթէ կիսամեռ ինկաւ:

Տղայք, զդուստրէք «Ոչ հիմա, այլ քիչ մը եւրը», «Միայն այս անգամ» և «Վտանդ չկայ» կոչուած թշնամիներէն և ուրիշ ասանց նման սատանային զինուորներէն, որ կամ մեր բարի սովորութիւններն ձգել ապրու կամ զմեզ չար ունակութեանց վարժեցնելու և կամ վերջապէս մեր թէ բարոյական և թէ նիւթական վնասուն պատճառ լինելու համար մեզի հետ կը պատերազմին:

Աստուծոյ



ՅՈՒՇԱՅԻՆ ԿՐՍՅ

ՅՈՒՇԱՅԻՆ ԿՐՍՅ

Կրայի այս տեսակը կը գտնուի Միայնեալ նահանգաց կեդրոնական կողմէ ըլլ յամբընթաց ջուրերու մէջ: Այս կրայն կը փնտռուի կերակուրի համար, վասն զի անոր միսէն համեղ ապուր կը չինուի: Այս անտառուն երբ նոր կ'եղլէ թխուէ՛ շատ վաքը է, և ծանր ծանր կ'աճի: Մէկ տարեկան հասակի մէջ այնպէս փոքր է որ քառասուն կամ յիսուն հատը հազիւ մէկ քաշ կը կշռեն, բայց տակաւ տառակաւ կը մեծնան, և վերջապէս մէկ կրայն կրնայ տասնէն մինչև տասներկու քաշ կշռել:

Այս կրայն սովորութիւնները տարբերակ են: Կրայք իրենց ձուերը կ'աճեն գետակի մը եզերքն աւաղի մէջ, և արևուն ջերմութեամբ ձագերը ձուերէն դուրս կ'ելլին: Երբ ձագերը ձուերէն դուրս կ'ելլեն, կը մանեն ջուրի

մէջ, և հոն խրատանքին ինքզինք կը հոգայ: Այս կրայք խումբ կամ երամներ չեն կազմեր ինչպէս կ'ընեն ուրիշ անասունք: Ասանք մինչև գետակներու յետոյ յատակները կը գտնուին, կ'ուտեն ձուկ և խեցիկեղէն, բայց կ'ուտեն նաև բանջարեղէն, և շատ անգամ քնաս կը հասցունեն արտերուն և պարտէզներուն: Չմիան երեք կամ չորս ամսոց մէջ կը թաղուին գետակի մը յատակը յետի մէջ, կամ գետակի մը մօտ ծակի մը մէջ, և հոն կը մնան թմրեալ:

Այս կրայներն որսալու համար բաւական վարպետութիւն պէտք է: Որսորդն աճի ձուքը գոտապան մը որոյ մէկ ծայրն է սուր երկաթի, և միւս ծայրը կոյ ճանկ կամ կեռ: Որսորդը

կը պատի յետոյ գետակի մը եզերքն ի վեր, և յաճախ կը մտնէ ձուքի գաւազանին երկաթեայ ծայրը գետակին կակուղ յատակը: Եթէ օդի պղպղակներ ելլեն, որսորդը կը հասկնայ անմիջապէս թէ կրայն մը դարկած է, վասն զի երբ կրայ մը դարկուի, թռչներէն պարս կուտայ օդն, որ պղպղալով կ'եղլէ ջուրին երեսը: Ապա որսորդը գաւազանին միւս ծայրի կեռով կրայն իւր տեղէն կը քաշէ զէպ ի ջուրին երեսը: Որսորդք ու մամք շատ ձարատր են կրայ գտնելու և որսալու: Որսորդք

խոշոր աւազաններ պատրաստելով կը լեյնեն գանձք ջրով, և այս աւազաններու մէջ կը պահեն կրայները մինչև որ շուկայ տարուին վաճառուելու: Այս տեսակ կրայն շատ շուտ չը մեռնիր: Երբ դրախը բաժնուի մտրով նէն, անդու ի մտրովնը անդամները կը շարժէ օրերով, և բաժնուած գրախը կը խաճնէ ինչ բանի որ հանդիպի:

ԱՅՏԱՆԱԲԵՐՆԵՐՈՒ ԳԻՆԸ
ԱՄՍՍԻԱՆ (Հայերէն գրով, և Հոյ-Տանկէրէ), փոսթմայի ծախքով, տարին 6 դահեկան է:

Ամբիկայի Մեծնորայ Ընկ. Խմբակի
Ֆիլիանճըրը Խօզուշու. Ս
ԿՈՍՏԱՆԳՆՈՒ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. ՅԱՒՈՒ